Հանրապետական

Մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

Հետազոտական աշխատանք

Դպրոց՝ <<ՀՀ Տավուշի մարզի Գետահովիտի միջնակարգ դպրոց>>

Թեմա՝ <<Ինչպես արդյունավետ դաս պլանավորել>>

Վերապատրաստող մենթոր՝ Նաիրա Ղազումյան

Ուսուցչ՝ Նաիրա Պողոսյան

2023

Բովանդակություն

Ներածություն....3

1.ԻՆՉՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՍ ՊԼԱՆԱՎՈՐԵԼ....5

1.2 Ուսուցման տաքսոնոմիաներ (աստիճանակարգումներ)....7

1.3 Ուսուցման փուլային բնույթը....7

1.4 Ուսուցման պլանավորման չորս կարևոր հարցերը....8

1. 5 Դասի տիպերը....8

1. 6 Դասի կառուցվածք....9

1.7 Դասի պլանավորում....9

1. 8 Նկատառումներ դասապլան կազմելու վերաբերյալ....11

ԴԱՍԱՊԼԱՆԻ ՁԵՎԱՆՄՈՒԾ....14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ....17

Գրականության ցանց....18

Ներածություն

Դասի արդյունավետ պլանավորումը դասավանդման գործընթացում կարևոր գործընթացներից մեկն է, և դրանց ճիշտ օգտագործումը կարող է զգալիորեն բարձրացնել ուսուցման որակը, ինչպես նաև նպաստել սովորողների ներգրավվածությունը դասապրոցեսին:

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման եւ դաստիարակության խնդիրների լուծման համար հաճախ կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների և սովորողների գործունեության կազմակերպման ձև: Արդյունավետ դաս անցկացնելու համար նախ և առաջ անհրաժեժտ է ձևակերպել նմապատը և հետո իրականացնել գործողություն օրինակ՝ ուսումնասիրել ինչ-որ թեմա, կատարել գրավոր աշխատանք, ներկայացնել ուսումնասիրած կամ յուրացրած նյութը: Դասի ընթացքում բացահայտված գիտելիքների բաղադրիչները պետք է ապահովեն այս կամ այն ամբողջական խնդրի լուծման որոշակի մասը: Առանձին դասերի կոնկրետ խնդիրները պետք է դիտարկվեն մյուսների հետ փոխկապակցված: Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ մտավոր գործունեության ակտիվությունը նյութի հետ ծանոթացմանը համաընթաց ավելանում է, եթե

միաժամանակ աշակերտները կատարում են տվյալ նյութի յուրացմանը օժանդակող առաջադրանքներ, և պահպանվում են հետեւյալ պայմանները՝

1) առաջադրված խնդիրը աշակերտներին մղում է որոշակի

մտավոր հնարքի կիրառման,

2) աշակերտներն ունեն տվյալ առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ, եւ տվյալ հնարքի կիրառման հմտություններ,

3) տվյալ հնարքը համապատասխանում է նյութի բովանդակությանը, եւ ինչքան շատ է համապատասխանում, այնքան ակտիվացնում է գործունեությունը:

Դասի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է նաև աշակերտի ակտիվությունը ինչպես նաև հետադարձ կապը, որը կարող ենք իրականացնել հարցադրումների միջոցով, որն էլ իր հերթին բխում է հետևյալ նպատակից՝ պասիվ աշակերտներին դասին ընդգրկել:

Անհրաժեշտ է դասի պլանը կազմել այնպես, որ արդյունավետ պլանավորումը, ազդեցություն ունենան ուսուցման որակի բարձրացման վրա։ Դասի պլանավորման արդյունէները պետք է լինեն հստակ, աշակերտը պետք է հասկանա, թե ինչ են իրենից ուզում և ինչպես այն կատարել։

Դասի պլան կազմելիս անհրաժեշտ է առանձնացնել՝ դասի կառուցվածքային տարրեր, ուսուցչի գործունեությունը, աշակերտի գործունեությունը։ Անհրաժեշտ է նշել ուսուցման ձևը և մեթոդները, ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերը, ստուգման ձևերը եւ միջոցները, ուսուցչի և աշակերտների գործողությունների հաջորդականությունը։

1.1 ԻՆՉՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՍ ՊԼԱՆԱՎՈՐԵԼ

Ուսուցման ընթացքում կարևոր է ուսուցչի կողմից դասի պլանի ճիշտ և ժամանակին պատրաստելն է, ինչպես նաև դասի նշումների մշակումը: Դասի պլանը կարևոր է ոչ միայն հաշվետվության, այլև ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման տեսանկյունից:

Ցանկացած դասի պլան պետք է ունենա թեմա, համապատասխանի հանձնարարված առաջադրանքներին և ունենա ճշգրիտ կառուցվածք: Ըստ դասի առաջադրված նպատակների՝ դասի պլանը կարելի է դասակարգել հետևյալ ենթակետերի.

- Նոր թեմայի ներածություն
- Անմրապնդել նյութը
- Կրկնություն
- Հմտությունների և գիտելիքների կառուցում

Ինչպես ստեղծել դասի պլան

Անկախ դասի թեմայից, նպատակից, ինչպես նաև դասի տեսակից ու տեւողությունից՝ դասի պլանի հիմնական կառուցվածքը մնում է անփոփոխ: Ամբողջական դասի պլանը միշտ պարունակում է.

- դասի վերնագիր
- դասի նպատակների և խնդիրների նկարագրությունը
- դասի մոտիվացիոն մասը
- եզրակացությունը և ուսումնասիրության արդյունքը
- նաև տնային աշխատանք, որը կարող է լինել կամ չլինել՝ կախված վերը նշված պարամետրերից:

Դասի պլանների տեսակները

Կախված դասարանից, ինչպես նաև ուսուցչի առաջադրած առարկայից և նպատակներից՝ դասի պլանը կարող է տարբերվել, բայց ընդհանուր առմամբ դասի պլանը բաժանվում են մի քանի տեսակների:

Առաջին տեսակը *պլանավորված* պլանն է: Ամենապարզ պլանը, որը կազմված է պատրաստի նյութի հիման վրա, բաժանված է հատվածների և մասերի: Յուրաքանչյուր բաժին ունի վերնագիր և ենթագրեր, որոնք ամփոփում են իր նկարագրած թեման:

Գրառումների երկրորդ տեսակը *սխեմատիկ* պլանն է: Ներկայացվելիք բոլոր թեմաները պետք է ներկայացվեն հարցական նախադասությունների տեսքով, ինչը թույլ է տալիս հստակ ընդգծել թեմայի առավել համապատասխան մասերը: Յուրաքանչյուր թեմա ներկայացված է բավականին հակիրճ՝ ընդամենը մոտ երկու-երեք նախադասություն:

Երրորդ տեսակը տեքստային է: Տեքստայինը առավել հարմար է դասի պլան կազմելու համար, որտեղ գերակշռում է տեքստային բաղադրիչը, մասնավորապես, դրանք կարող են լինել մարդասիրական առարկաներ, գրական դասեր, որտեղ էական դեր են խաղում հեղինակների մեջբերումներն ու աֆորիզմները:

Ուսուցման պլանավորումը ենթադրում է ոչ միայն դասերի պլանավորում, այլև ուսումնական գործունեության պլանավորում առավել ընդհանրական մակարդակով: Այդ առումով ստորև ներկայացվում են պլանավորմանն աջակցող մի շարք գործիքներ: Օրինակ՝ ուսումնառության դիտարկված արդյունքների կառուցվածքը (ՈԻԴԱԿ) շատ օգտակար գործիք է, եթե ուսուցիչը ցանկանում է ուսուցումը կառուցել փոքր գաղափարից ավելի ընդհանուրը տանելու մոտեցմամբ: Բլում-Անդերսոնի աստիճանակարգումը օգտակար է, եթե ուսուցիչը ցանկանում է ուսումնական գործընթացը տրոհել մասերի:

Այս հատվածում ներկայացվում են նաև այլ գործիքներ:

1.2 Ուսուցման տաքսոնոմիաներ (աստիճանակարգումներ)

Վերջին տասնամյակներում կրթության ոլորտում մեծ տարածում են գտել տաքսոնոմիաները: Դրանք նպատակ ունեն զանազանելու ուսուցման տարբեր մակարդակներն ու ուսուցիչներին և ուսումնական ծրագրեր մշակողներին օգնել ուսուցումն ավելի բազմազան դարձնելու և սովորողների մոտ տարբեր մակարդակի հմտություններ ու կարողություններ զարգացնելու հարցերում:

Տաքսոնոմիաները կարելի է բաժանել վերլուծականի և համադրականի: Վերջինիս դեպքում ուսուցիչը աշակերտներին գիտելիք է մատուցում մասնավորից դեպի ընդհանուրը գնալով: Իսկ վերլուծականի դեպքում իմացությունը բաժանվում է մասերի, և ուսուցումը կատարվում է յուրաքանչյուրի զարգացման ուղղությամբ:

1.3 Ուսուցման փուլային բնույթը

Շատ կարևոր է ուսուցման փուլային պլանավորումը: Մենք հաճախ մտածում ենք, որ ուսուցումը տեղի է ունենում գիտելիքի փոխանցում-գիտելիքի յուրացում մեխանիզմով: Մինչդեռ իրականում սովորելու գործընթացը փուլային է: Եվ ուսուցումը տեղի է ունենում աստիճանական ձևով: Այս առումով ներկայացնենք ուսուցման փուլային մի քանի տաքսոնոմիաներ: Դրանք օգնում են ուսուցիչներին ուսուցումը տանել իմացության ցածր մակարդակից մինչև վարպետության բարձր մակարդակ: Այդպիսի աստիճանակարգում է, օրինակ, Միլլերի աստիճանակարգումը:

Միլլերի աստիճանակարգումը Հայաստանում մեծ տարածում չունի: Բայց այն շատ կարևոր է գիտելիքը վարքագիծ դարձնելու առումով: Առաջին մակարդակում սովորողը պարզապես գիտի: Գիտենալը ուսուցման հիմքն է: Բայց սա բավարար չէ: Կարևոր է գիտելիքը օպերացիոն դարձնելը: Այս առումով երկրորդ մակարդակում սովորողը պետք է գիտելիքը գործողության մեջ դնի և իմանա՝ ինչպե՞ս, այսինքն՝ հասկանա: Երրորդ մակարդակում սովորողը պետք է կարողանա ցույց տալ՝ ինչպե՞ս: Վերջապես չորրորդ մակարդակում պետք է կարողանա կիրառել: Եթե ուսուցման

գործընթացում սովորողն անցնի չորս փուլերով, ապա կարելի է ասել, որ նա լիարժեք սովորել է նյութը:

1.4 Ուսուցման պլանավորման չորս կարևոր հարցերը

Մեկ այլ հետաքրքիր մոտեցում է հարցերի միջոցով ուսուցման փուլերի պլանավորումը: Ուսուցիչը պլանավորման գործընթացում պետք է պատասխանի 4 հարցի:

- Ի՞նչ պետք է անի ուսուցիչը դասին նախապատրաստվելիս կամ ընթացքում:
- Ի՞նչ պետք է անեն ուսուցիչն ու աշակերտները միասին:
- Ի՞նչ պետք է անեն աշակերտներն իրար հետ՝ առանց ուսուցչի միջնորդության:
- Ի՞նչ պետք է անի յուրաքանչյուր աշակերտ ինքնուրույն:

Այս հարցերին պատասխանելը հնարավորություն է տալիս պլանավորելու դասը, որի ընթացքում տեղի են ունենում ուսուցողական տարբեր գործընթացներ:

Հարկ եմ համարում անցում կատարել նաև դասի բաղադրիչներին:

1. 5 Դասի տիպերը

Դասը դասակարգում են ըստ դիդակտիկ նպատակների, գիտելիքների կազմակերպման նպատակների, դասի անցկացման միջոցների և բովանդակության, ուսումնական գործընթացի հիմնական փուլերի, դասի ընթացքում լուծվող դիդակտիկ խնդիրների, դասավանդման մեթոդների և սովորողների կրթական գործընթացի կազմակերպման միջոցների: Այս տեսանկյունից առանձնացվում են դասի հետևյալ տիպերը՝

1. Նոր ուսումնական նյութի յուրացման դաս
2. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման դաս (յուրացված նյութի նպատակային կիրառություն)
3. Ընդհանրացման և համակարգման դաս

4. Համակցված դաս
5. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների շտկման և վերահսկման դաս

1. 6 Դասի կառուցվածք

Ուսումնառության ընթացքում առաջացած և ուսումնական գործընթացի նպատակայի առաջընթացն ապահովող տարերի տարաբնույթ փոխազդեցությունների համագումարը կոչվում է դասի կառուցվածք։

Դասի կառուցվածքային փուլերն են՝

1. Կազմակերպչական
2. Տնային առաջադրանքի բազմակողմանի սդուգում
3. Գիտելիքների կարողությունների և հմտությունների բազմակողմանի ստուգում,
4. Նոր նյութի ակտիվ և ըմբռնումով յուրացնելուն միտված նախապատրաստություն
5. Նոր գիտելիքների յուրացում
6. Նոր նյութի ըմբռնման ստուգում։ Նոր գիտելիքների յուրացում
7. Նոր նյութի ամրապնդում
8. Տնային առաջադրանքի հանձնարարում, իրականացման մեկնաբանում,
9. Դասի ամփոփում

1.7 Դասի պլանավորում

Արդյունավետ դասավանդման կարևոր նախապայման է դասին հանգամանալից նախապատրաստվելը։ Սա ենթադրում է նյութին մանրամասն և բազմակողմանիորեն ծանոթանալը և դասի ողջ ընթացքը մոդելավորելը։ Թեմայի

ընտրությունից հետո դասի պլանավորումը կարելի է տրոհել հետևյալ հաջորդական քայլերի՝

- <u>1-ին քայլը</u> դասի նպատակի հստակ գիտակցելն է. ու՞ր ենք ուզում հասնել, ի՞նչ ուղիով, ի՞նչ միջոցներով: Նպատակի և դրանից բխող խնդիրների ձևակերպման հարցում ուսուցիչը պետք է օգտվի առարկայական չափորոշչային պահանջներից և ուսումնական ծրագրի «Թեմայի ուսումնասիրությունը սովորողին հնարավորություն է տալիս» բաժնից: Ձևակերպված խնդիրների իրականացումից հետո աշակերտի ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները պետք է բավարարեն առարկայական չափորոշիչի պահանջներին (Ա, Բ, Գ մակարդակներ և արժեքային համակարգ): Բացի այս նորմատիվային պահանջներից, ուսուցիչը պետք է տեսնի նաև տվյալ դասի իրատեսական հնարավորությունները, կիրառելությունն ու իր մեջ պարունակող դաստիարակչական տարրերը նաև միջառարկայական կապի տարրերը:
- <u>2-րդ քայլը</u> սովորողների նախագիտելիքների ախտորոշումն է: Սա շատ կարևոր է, քանի որ ամեն մի մատուցվող նյութը հիմնվում է նախկինում ստացված գիտելիքների ու կարողությունների վրա և պիտի համապատասխանի տվյալ դասարանի ընդհանուր մակարդակին: Ախտորոշումը իրականացվում է նախորդ դասերի ընթացքում դիտման մեթոդի կամ հարց ու պատասխանի միջոցով: Եվ անհրաժեշտության դեպքում նախորդ դասին իսկ կարելի է հիմքեր դնել տվյալ դասի համար:
- <u>3-րդ քայլը</u> ուսուցչի կողմից ակնկալիքների ու սպասումների ճշգրտումն է, ինչպես ընդհանուր դասարանից, առանձին խմբերից, այնպես էլ ամեն մի աշակերտից:
- <u>4-րդ քայլը</u> դասի խնդիրներից ելնելով համապատասխան մեթոդի ընտրությունն է:
- <u>5-րդ քայլը</u> դասասենյակի համապատասխանեցումն է տվյալ դասի ընթացքից բխող պահանջներին: Ուսուցիչը պետք է դասավորի բոլոր այն նյութերը, որոնք օգտագործվելու են տվյալ դասին, այդ թվում նաև ուսումնական նյութերը,

համոզվի, արդյոք սարքին են անհրաժեշտ տեխնիկական միջոցները և ցանցային սարքավորումները, բավարար է ծրագրային ապահովումը:

- **6-րդ քայլը** գնահատման ձևի ընտրություն, չափանիշների ճշգրտումն ու մշակումն է:
- **7-րդ քայլը** ժամանակի բաշխումը՝ ըստ փուլերի:

Այս ամենի մասին նախօրոք հոգալը ուսուցչին լրացուցիչ վստահություն կներշնչի, կնպաստի դասի հարթ ընթացքին և ժամանակի արդյունավետ տնօրինմանը: Առաջարկվող հարցերի պատասխանները, կօգնեն ուսուցչին ավելի հստակ գնահատել դասին իր պատրաստ լինելը և բարելավել դասի պլանը:

- Որքանո՞վ են իմ ակնկալիքներն ու սպասումներն իրատեսական:
- Ինչպե՞ս կարող եմ համոզվել, որ աշակերտները պատրաստ են կատարել վարժությունը կամ քննարկել նյութը:
- Ինչպե՞ս պետք է կառուցեմ առաջադրանքը:
- Որքանո՞վ են իմ ակնկալիքները իրատեսական ժամանակի առումով:
- Ինչպե՞ս գնահատել աշակերտների ձեռք բերած գիտելիքները և հմտությունները:
- Ի՞նչ եմ ուզում, որ աշակերտները զգան /ինչպիսի՞ վերաբերմունք եմ ուզում ձևավորել/:

1. 8 Նկատառումներ դասապլան կազմելու վերաբերյալ

Յուրաքանչյուր թեմայի ուսուցման ընթացքում, ինչպիսի մեթոդ էլ կիրառելիս լինի ուսուցիչը, հնարավորինս պետք է խուսափի միօրինակ ստանդարտ դասապլանից:

Պարտադիր չէ, որ դասապլանը կազմվի համապատասխան մանրամասներով կամ քայլ առ քայլ նկարագրելով: Ուսուցչի համար է դասապլանը, և նա կարող է հակիրճ գրառել հիմնական քայլերը, բայց օրինակելի ուսուցում կազմակերպել: Բացի

դրանից, կլինեն դասեր, որտեղ ուսուցիչը 1–2 ուսումնական նպատակ է հետապնդելու, և կարիք չի լինի դասապլանի՝ ընդունված բոլոր քայլերով ընթանալ ու շեղվել հիմնական նպատակից: Այսուհանդերձ, խորհուրդ է տրվում դասի հիմնական փուլի՝ ուսումնառության ընկալման հարցում ուսուցիչների ուշադրությունը հրավիրել մի քանի կարևոր քայլերի վրա, որոնք խիստ անհրաժեշտ են և նպաստելու են աշակերտների կողմից *հետազոտությունը* խթանելու, *բովանդակությունը* յուրացնելու և այն օգտագործելու համար:

Արևմուտքի մանկավարժները բուն ուսումնառության ընթացքը ներառում են հինգ կարևոր տարրերի մեջ. դրանք խորհուրդ է տրվում նկատի ունենալ տարբեր թեմաների, տարբեր մեթոդների կիրառման ընթացքում:

- **Ներգրավում.** մեզ ծանոթ խթանման փուլն է, որ ուսուցիչը մշտապես պետք է նկատի առնի: Այստեղ կարևորը աշակերտների հետաքրքրությունն արթնացնելն է և դասը նրանց գիտելիքների ներկա մակարդակից սկսել: Աշակերտները պատկերացնում են, թե ինչ են անելու դասի ընթացքում:
- **Հետազոտությունը.** սա դասապլանի ամենահիմնական փուլն է. աշակերտներն աշխատում են խմբերով և ուսումնասիրում են հիմնական առաջադրանքը, իսկ ուսուցիչն օգնում է, հանդես է գալիս ուսումնառությունը կազմակերպողի դերում: Դասաժամի հիմնական մասը հատկացվում է այս փուլին:
- **Բացատրություն.** այս փուլում ուսուցիչը բացատրություն է տալիս աշակերտների հարցերին և լսում նրանց բացատրությունները: Ուշադիր պիտի լինի բոլորի մասնակցությունն ապահովելու և հատկապես հետ մնացողներին հետևելու համար: Այս փուլում է գիտելիքը «կառուցվում»: Այստեղ կարելի է ընդգրկել հիմնական հարցադրումներ և հնարավոր պատասխաններ, քայլեր՝ ուղղված գիտելիքի համատեղ կառուցմանը, հմտությունների մշակմանը:
- **Բովանդակության կատարելագործում.** այս կարևոր փուլում մշակվում, ավարտվում է բովանդակության ընկալումը, նոր գիտելիքի ձեռքբերումը, դասապլանի նպատակը ավարտին է հասցվում: Այստեղ կարելի է ներառել գործընթացային հմտություններ, վարժություններ կկատարեն, որոնք կօգնեն աշակերտներին ավելի հեշտությամբ ըմբռնելու և բավարարելու ուսումնառության պահանջները:

- **Արժևորում.** այս փուլը սովորածի, գիտցածի գնահատումն է, դրսևորումը, կարևորությունը հասկանալն ու դասի ընթացքի զգացում ձեռք բերելը: Եթե ուսուցիչը խնամքով դասապլան է մշակում և մտածում դրա նպատակների մասին, ապա արժևորումը, բնականաբար, հաջորդ քայլն է: Այն վարժությունները, որ կատարում են աշակերտները, ուսուցչին հնարավորություն են տալիս պատասխանելու, թե ինչ իմացան աշակերտներն իր նպատակների մասին, և ինչպես երևաց դա: Արժևորումը հենց դրսևորվում է ուսուցչի ընտրած նպատակի և այն գործառույթների, վարժությունների մեջ, որ կատարում են աշակերտները: Նպատակներին համապատասխան վարժություններ ընտրելը ուսուցչի կարևոր խնդիրներից մեկն է. նա պետք է իմանա, թե ինչ սովորեցնի և թե ինչպես կարելի է լավագույնս սովորեցնել: Ուսուցչի *պլանավորման* արժևորումը աշակերտի ուսումնառության արժևորումն է:

Դասի ավարտին պետք է չշտապել, անհրաժեշտ է հետ գնալ, հետադարձ հայացք գցել դասավանդման բովանդակության ու սովորողների փոխազդեցությունների վրա: Դա կօգնի կողմնակի աչքով նայել կատարված աշխատանքին և նկատել բացթողումներն ու թերացումները, պլանավորել հետագա աշխատանքները:

Նշված նկատառումներն ու խորհուրդները ևս պարտադիր կաղապար չեն կարող լինել դասապլանի համար: Ուսուցիչն ազատ կարող է իր թեմայի համար համապատասխան դասապլան մշակել, կարևորը նպատակադրումն ու նպատակին հասնելու միջոցներ, ճանապարհներ, մեթոդներ ու հնարներ ընտրելն ու օգտագործելն է, կարևորը չափորոշիչներով, ծրագրով սահմանված արդյունքին հասնելն է: Մեթոդն ու հնարը ծնվում են շատ դեպքերում հենց ուսուցման ընթացքում, դասի ժամանակ, ուսուցիչն է ծնունդ տալիս ուսուցման եղանակին, միջոցին: Դա ստեղծագործաբար աշխատող, խոհեմ ու բանիմաց ուսուցիչն է:

ԴԱՍԱՊԼԱՆԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ

Ուսուցիչ	Ն.Պողոսյան
Դասարան	9-րդ դասարան
Ամիս, ամսաթիվ	20.09.23
Առարկա, դասի թեմա	Գրականություն, Առասպել, վիպերգ, էպոս
Դասի տիպը	Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման դաս
Դասի կառուցվածքը	Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդման և զարգացման դաս
Դասի նպատակները	**Տեքստի ընկալում**-խորացնել պատկերացումը տեքստում պատկերված ազգային ինքնագիտակցման և արժեհամակարգի, ժամանակաշրջանի, պատմության, հերոսական պատումի մասին **Տեքստի ուսումնասիրում**-ձևավորել գիտելիքներ հեղինակի կյանքի, տեքստի վրա հեղինակի կենսագրության և ապրած ժամանակաջրժանի ազդեցության, տեքստի բառապաշարի, ոճի, կառուցվածքի, ժանրային առանձնահատկությունների, դիպաշարի, լոնֆլիկտի մասին։ **Տեքստի ստեղծում**-նպաստել ստացած ֆիտելիքը հիշողությամբ և սեփական խոսքով բանավոր կամ գրավոր կերպով վերարտադրելուն, խաղի հնարավության դեպքում՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ մեկնաբանելուն
Խնդիրները	Ընդգծել գլխավոր գաղափարն արտահայտող նախադասությունը, մեկնաբանել
Մեթոդները	Հարցուպատասխանի մեթոդ
Ձևավորվող կարողությունները	Սովորել սովորելու կարողությունները, լեզվական գրագիտություն և կարողություն, մշակութային, մաթեմաթիկական

Խաչվող հասկացություններ	**Պատճառ և հետևանք**-դիպաշարի, գրական կերպարի զարգացումը: **Կառուցվածք և գործառույթ**-գրական սեռերը, ժանրերը Անհատական և մշակութային արժեհամակարգ-գրողի կողմից օգտագործված բառապաշարը՝ միջավայր, տրամադրություն, կերպար արտահայտելու նպատակով, ստեղծագործության գաղափարը: **Ժամանակ և տարածություն**-գրողի կենսագրությունը, ժամանակաշրջանը, միջավայրը, գաղափարների արդիականությունը և ժամանակագրությունը:
Միջառարկայական կապեր	**Հայոց լեզու**-բառապաշար, խոսքի կաղապար և մտածողություն: **Պատմություն**-պատմական ակնարկ հեղինակի կենսագրությանն ու ստեղծագործությանն առնչվող ժամանակաշրջանի մասին: **Հասարակագիտություն**-դրական ու բացասական կերպարների երևույթների, արարքների սահմանումը ստեղծագործության մեջ: **Արվեստ**-ստեղծագործությանն առնչվող պատկերներ, նկարազարդումներ, մեղեդիներ և այլն:
Անհրաժեշտ սարքավորումները	Դասագիրք, օժանդակ նյութ, տետրեր գրիչներ, գրատախտակ, ավիճ:
Դասի ընթացքը	Նախապատրաստական մասում կատարել հաշվառում,խթանման նպատակով կազմակերպել 17 բանավոր հարցուպատասխան:/15ր/ Այնուհետև անցնել դասի հիմնական մասին՝ վարժությունների միջոցով նյութի ամրապնդմանը: Քայլ 1-բացահայտել նախատեսված աշխատանքի նպատակը:/5ր/

	Քայլ 2-վերարտադրել առաջադրված նյութի կատարման համար անհրաժեշտ գիտելիքները, կարողությունները և հմտությունները։/10ր/ Քայլ 3-դուրս գրել անծանոթ բառերը, ընդգծել գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոցները։/5ր/ Քայլ 4 – ստուգել կատարված աշխատանքները։/5ր/ Քայլ 5 – քննարկել , ուղղել սխալները և գնահատել։/5ր/ Քայլ 6 –հանձնարարել տնային առաջադրանք։/5ր/
Գնահատում	Ուսուցիչը լրացուցիչ հարցուպատասխանի արդյունքում դասամատյանում կնշանակի գնահատականներ
Վերջնարդյունք	Մեկնաբանել հեղինակի կենսագրությունը, ապրած ժամանակաշրջանը։ Վերլուծել՝ ինչ կերպ է արտահայտվում տեքստում պատկերված ժամանակաշրջանը, միջավայրը, բառապաշարի, դիպաշարի, կոնֆլիկտի, ժանրի կառուցվածքի առանձնահատկությունները։ Որոշել տեքստի գլխավոր և երկրորդական գաղափարները։ Բացահայտել գրական կերպարի կամ հերոսի առանձնահատկությունները։ Առժեվորել հեղինակի ապրած կյանքը։ Հիմնավորել սեփական տեսակետը։ Վերլուծել գրական երկը՝ ընդգծելով դրա առդիականությունը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով կատարած աշխատանքը կարող ենք ենթադրել որ, դասի ճիշտ կազմակերպումը սկսվում է դասի համար կազմված պլանից, որում արտացոլվում են դասի ընթացքում կատարվելիք բոլոր գործողությունները: Դասի յուրաքանչյուր րոպեն պետք է օգտագործվի, որպեսզի հնարավոր լինի արդյունավետ դարձնել ուսուցումը: Դասերը կարող ենք դասակարգել ըստ ուսուցման գործընթացը կազմակերպող դիդակտիկական նոր համակարգերի (ըստ պրոբլեմային ուսուցման, ըստ ծրագրավորված ուսուցման, ըստ անհատականացված ոսւուցման և այլն):

Ես փորձեցի վեր հանել դասապլանի կազմման մանրամասները և մանրամասնորեն խոսեցի այն մասին,թե որ դետալը ինչի համար է անհրաժեշտ:Արդյունքում եկա այն եզրակացության,որ դասապլան գրելը, բավականին կարևոր լինելուց բացի, նաև անհրաժեշտ է,որովհետև այն բավականին հեշտացնում է ուսուցչի աշխատանքը,մանավանդ այն դեպքում,երբ ուսուցիչը արդեն գիտակցաբար է գրում դասապլան և կարողանում է ճիշտ օգտվել արդեն պատրաստի կաղապարներից և ճիշտ հարմարեցնել իր օրվա դասանյութին:

Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս.,- Մանկավարժություն
2. Խաչատրյան Ս. / Ուսուցման արդյունավետ հնարներ-Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.
3. https://uteach.io/ru/articles/plan-uroka-kak-pravilno-ego-sostavit